ցոյց է տալիս վերջին ժամանակներս մակեդոնացիների և հայերի մէջ տեղի ունեցած մերձեցումը և համերաշխ ջանքերով ընդհանուր թշնամու դէմ կուռելու փորձերը։

Մակեդոնիայի համար «շուտով կը բացուի ցանկալի առաւօտը, բացականչում է իր գրքոյկի վերջում. այդ առաւօտը, հեռու չէ»։

Իսկ մենք կարծում ենք,- որ անհիմն է այդ լաւատես հայեացքը, քանի որ այժմեան քաղաքական աշխարհը բոլորովին այլ երգ է երգում, քանի դեռ շատ մութ-մութ գիշերներ պիտի անցնեն, դեռ շատ արիւն պիտի հոսէ մինչև այդ առաւօտը հեռու է նա և անյայտութեան քողով ծածկուած։

Ե. Թ.

Մ. Պէշիկթաշլեան, ՏԱՂԵՐ, հեղինակի պատկերով և Ղէօլ առաջաբանով, Թիֆլիս, 1903 թ. գինը 40 կոպ.

Հայ նշանաւոր բանաստեղծ Մ. Պէշիկթաշլեանի «Տաղերը» 33 տարուց յետոյ արժանանում են երկրորդ տպագրութեան։ Այդ նոր հրատարակութիւնը ցանկալի էր տեսնել աւելի խնամքով կատարուած, քան ներկայացնում է մեզ. ընթերցողին չի տրւում ոչ մի կենսագրական տեղեկութիւն բանաստեղծի մասին, անյայտ են մնում նոյն իսկ նրա ծննդեան և մահուան թուականները։ Վատ չէր լինի, եթէ գրքոյկին կցած լինէր Պէշիկթաշլեանի մասին եղած գրականութեան համառօտ ցուցակը։ Վրիպակների թիւը բաւական պատկառելի չափ է ստացել։ Պէշիկթաշլեանի «Տաղերի» մէջ մի 4—5 իսկական բանաստեղծական գոհարներ կան, մնացածը ըստ արժանւոյն մոռացուած են և միմիայն նշանակութիւն կ'ունենային հեղինակի երկերի լիակատար հրատարակութեան մէջ։ Սակայն այդպիսի մի հրատարակութիւն լուրջ կերպով իրագործելու համար պահանջւում է աւելի մեծ խնամք և պատրաստութիւն, քան այդ երևում է ներկայ գրքոյկը հրատարակողների մէջ։

Na.

ՄԵՂՈՒԱԲՈՒԵՈՒԹԻՒՆ. կազմեց Գ. Ղազարեան, նկարներով. Վաղարշապատ, 1903.

Գիւղատնտեսութեան ինչպէս միւս ճիւղերը, այնպէս էլ մեղուապահութիւնը դարերից ի վեր ոչ մի քայլ առաջ չէ գնա-